ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ «Ժողովուրդն իմաստուն է» խորագրով արտադասարանական միջոցառմամբ արժեհամակարգի ձևավորումը աշակերտների մեջ

Հետազոտող ուսուցիչ՝ Սուսաննա Ներսիսյան
Կոտայքի մարզ Գեղադիրի միջնակարգ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....2

Սովորողների արժեհամակարգի ձեվավորումը արտադասարանական միջոցառումների միջոցով.....4

«Ժողովուրդն իմաստուն է» խորագրով միջոցառման նախապատրաստական աշխատանքները.....5

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ.....6

«ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԻՄԱՍՏՈՒՆ Է» ԲԵՄԱԳԻՐ.....8

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....16

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....17

ՀԱՎԵԼՎԱԾ.....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի առջև դրված հիմնական խնդիրը՝աշակերտների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը,դժվար է լուծել առանց պատշաճ ձևով կազմակերպված արտադասարանական դաստիարակչական աշխատանքի,իսկ վերջինիս արդյունավետության ապահովումը անհնար է առանց նրա մշակված,կուռ ու ամբողջական համակարգի: Աշակերտների ամբողջական գործունեությունը պետք է նպատակաուղղել այն բանին,որ գիտելիքների հարստացման բովանդակությունն ու ձևերը,ինչպես դասապրոցեսում, այնպես էլ արտադասարանական դաստիարակչական աշխատանքների ժամանակ կառուցված լինեն համակողմանի հետաքրքրասիրության հիմքի վրա,նրանց զինեն երևակայությամբ,կապ ստեղծեն այսօրվա երազանքի և վաղվա ռեալ իրականության միջև: Ինչպես նշել է մեծ մանկավարժ Սուխոմլինսկին. «Չի կարելի փոքրիկ մարդու հոգեկան աշխարհը հանգեցնել միայն ուսման: Եթե մենք ձգտենք այն բանին,որ երեխայի հոգու բոլոր ուժերը կլանվեն դասերով, կյանքը նրա համար կդառնա անտանելի: Նա պետք է լինի ոչ միայն դպրոցական,այլև ամենից առաջ մարդ յուր բազմակաղմանի հետաքրքրություններով,պահանջմունքներով,ձգտումներով»: Անշուշտ մեծ է միջոցառումների դերը,որոնք կարող են սեր և ձգտում առաջացնել դեպի ուսումնական գործընթացը: Աշակերտն այդ միջոցառումներից պետք է բավարարված և ինքնագոհ լինի, այն է՝ միջոցառումը պետք է համապատասխանի աշակերտի զգացմունքներին,ապրումներին: Միջոցառումները դառնան դպրոցականի բազմակողմանի զարգացման ու դաստիարակության միջոց,աշակերտը լինի միջոցառման առաջատարն ու պատասխանատուն: Որպեսզի աշակերտն ապագայում իրեն զգա պետության քաղաքացի, դեռ դպրոցական տարիներից նրա մեջ պետք է ձևավորել ինքնուրույնություն և նախաձեռնելու կարողություն,որոնց կնպաստեն նաև արտադասարանական բազմաբնույթ միջոցառումները:

Անհրաժեշտ է համապատասխան միջավայր ստեղծել աշակերտների հետաքրքրությունների ձևավորման և ինքնադրսևորման համար: Արտադասարանական միջոցառումները այն կարևոր ազդակն են, որոնք նպաստում

են աշակերտի ազատ, անկաշկանդ կամարտահայտմանը : Ուստի տվյալ առարկան դասավանդող ուսուցչի և դասղեկի նպատակը պետք է լինի նա

Արտադասարանական միջոցառումներին աշակերտներին նպատակամղել ստեղծական գործունեության:

Վերջիններս պետք է նպաստեն աշակերտների ինքնադրսևորմանն ու ինքնահիրացմանը: Աշակերտների համար դրանք պետք է լինեն ցանկալի և սպասված: Բնականաբար արտադասարանական բազմաբնույթ միջոցառումները /ցերեկույթ,էքսկուրսիաներ,այց թատրոն,պատկերասրահ, բեմականացումներ, գրական- ստեղծագործական ցերեկույթներ, քննարկումներ և այլն/ ,որոնց նախաձեռնողները և կազմակերպիչները կլինեն աշակերտները,իսկ ուսուցիչը ընդամենը խորհրդատուի դեր կստանձնի և սաների մեջ կձևավորի ինքնադրսևորման առավելագույն ջանքեր գործադրելու գործընթաց և պատասխանատվության զգացում:

Տարբեր տեսակի միջոցառումները չափազանց կարևոր են,որովհետև վերջիններիս միջոցով ուսուցիչները կարողանում են ի հայտ բերել երեխաների թաքնված ունակությունները,իրականացնել աշակերտների միջոցով ներդպրոցական մրցույթներ,որպեսզի սովորելու մոտիվացիա լինի:

Դպրոցը, բացի կրթելուց և դաստիարակելուց, պետք է հետաքրքիր և բովանդակալից միջոցառումների միջոցով աշակերտներին ներգրավի դպրոցական կյանք:

Սովորողների արժեհամակարգի ձեվավորումը արտադասարանական միջոցառումների միջոցով

Արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախմբումն է,որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ,բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:Թվարկված համախմբից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին:Արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես ագնահատելի է լեզվի և գրականության դերը :

Արժեհամակարգի մեջ կուտակված անցյալի փորձը,որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության,սեփական ժողովրդի պատմության,նրա ստեղծած մշակութային արժեքների,գիտական նվաճումների համար հպարտության զգացում:Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան,կրթական, հասարակական և այլն: Աշակերտների արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում,այլ նաև ուսումնական հաստատություններում՝ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Արտադասարանական միջոցառումների միջոցով ուսուցիչը հնարավորություն է ստանում աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, հայրենասիրական,բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ այն մեծագույն արժեքն է ,որի ձևավորմանը պետք է մեծ նշանակություն տալ յուրաքանչյուր դասին, միջոցառմանը և ամեն պահին:

Յուրաքանչյուր միջոցառման ժամանակ ուսուցիչը դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով թե՛ տարիքային առանձնահատկությունները,

թե՛թեմայի ընտրությունը և թե՛ ուսումնասիրման հիմնական խնդիրները՝ ելնելով դրված նպատակներից և ստացվող վերջնարդյունքից:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել ,որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժներիս ուշադրության կենտրոնում դասի թե միջոցառումնեի ժամանակ:

«Ժողովուրդն իմաստուն է» խորագրով միջոցառման նախապատրաստական աշխատանքները

Արտադասարանական աշխատանքները օրգանապես կապված են ուսուցման բուն գործընթացի հետ: Դրանք նպաստում են սավորողների նպատակասլաց աշխատանքին, ընդունակությունների բացահայտմանը և կազմում են անձի ձևավորման ու զարգացման գործընթացի շարունակությունը: Արտադասարանական աշխատանքների կազմակերպումը նույնպես պահանջում է ընդհանուր դիդակտիկական սկզբունքների պահպանումը՝տեսական գիտելիքների և գործնական առաջադրանքների սերտ կապը, գիտականություն, համակարգվածություն,մատչելիություն և հասանելիություն,գիտակից մոտեցում,ակտիվություն, դիտողականություն,աշխարհընկալում,կարողությունների և հմտությունների կայունություն,աշխատանքի ընթացքում դաստիարակչական գործունեություն: Նշված բոլոր սկզբունքները սերտորեն փոխկապակցված են:

Հիմք ունենալով այս սկզբունքները և հինգերորդ դասարանի աշակերտների ցանկությունը՝որոշեցինք անցկացնել գրական-երաժշտական միջոցառում՝ նվիրված ժողովրդական բառ ու բանին:

Մայրենիի դասընթացի հիմնական նպատակադրումները աշակերտի հաղորդակցական,համագործակցային,ստեղծագործական կարողությունների և ինքնուրույնության,ինչպես նաև գրավոր և բանավոր խոսքի զարգացումն է: Այս նույն նպատակին են ուղղված նաև արտադասարանական միջոցառումները:

Հինգերորդ դասարանի աշակերտների հետ կազմակերպեցի քննարկում: «Առաջարկությունների արկղիկի» ուսումնասիրությունից հետո,որոշեցինք դասարանը բաժանել խմբերի,կատարել հետազոտական տարաբնույթ աշխատանք, ամփոփել աշխատանքի արդյունքները և մշակել ծրագիրը:Որոշեցինք աշխատանքներին ներգրավել նաև ծնողներին: Դասարանի թվաքանակից ելնելով՝ բաժանվեցին երեք խմբի՝ յուրաքանչյուրում 3 աշակերտ, 3 ծնող: Ստացան հանձնարարականեր աշխատանքը կատարելու համար /տես հավելված էջ 16/:

Երեխաները ծնողների հետ միասին կատարեցին հետաքրքիր և ուսանելի աշխատանք: Քանի որ մեր գյուղը ձևավորվել էր 1915 թվականին Արևմտյան Հայաստանի տարբեր շեներից ու քաղաքներից գաղթած հայերով,այդ աշխատանքը շատ ավելի նպատակային եղավ: Նրանք գտան և ուսումնասիրեցին իրենց ապուպապերի գրվածքները,տատիկների օրհնանքները,խաղերն ու հետաքրքիր պատմությունները:

Ամփոփիչ աշխատանքից հետո աշակերտները եկան այն համոզման ,որ ամեն ինչի հիմքը պետք է փնտրել ստեղծագործ ժողովրդի ակունքներում: Նրանք այնքան հետաքրքիր և աշխույժ, ուսանելի և զարգացնող խաղեր էին գտել,որ առաջարկեցին անցկացնել ֆիզկուլտուրայի դասերին,կամ անցկացնել միջդասարանային մրցումներ:

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ

Ցանկացած միջոցառում ունի նպատակ,խնդիրներ,ընթացք և ավարտ:Որքանով են այս պահանջները պահպանվում միջոցառմների ժամանակ,դա կախված է ուսուցչից: Աշակերտները միայն հանձնարարվածը անգիր ասելով ...Հավատացեք դա ոչինչ չի տա: Իմ նպատակն էր.

1.Լիարժեք հաղորդակցվել հայերենով: Կառուցել գրագետ և գեղեցիկ բանավոր խոսք:

2.Հակիրճ և պարզ արտահայտել սեփական մտքերն ու տեսակետները:

3.Համառոտ և հետաքրքիր տեղեկություններ հավաքել հեքիաթագիրների և առակագիրների մասին:

4.Իմանա հեքիաթի,առակի,առած-ասացվածքի, հանելուկի ժանրային առանձնահատկությունները;

5.Իմանա ժողովրդա –խոսակցական, բարբառային բառերի և դարձվածքների կիրառության կարևորությունը:

6.Իմանա հեքիաթի տեսակները՝գրողի կողմից մշակված ժողովրդական և հեղինակային, դրանց առանձնահատկությունները;

7. Մտնել դերային խաղի մեջ,դառնալ փոքրիկ դերասաններ:

8. Ձևավորել արժեհամակարգի վերը նշված բոլոր դրույթները:

- քաղաքական-իրավական- ձևավորել մարդասիրական աշխարհայացք,նաև սեփական իրավունքի գիտակցում
- զարգացնել քաղաքացու այնպիսի որակներ,ինչպիսիք են՝կամավորություն,համագործակցություն,մասնակցություն, հանդուրժողականություն,քննադատական մտածողություն
- ձևավորել բարոյահիրավական հատկանիշներ՝ խիղճ, պատասխանատվություն,արդարություն, պատիվ,արժանապատվություն
- բարոյական- երեխաների մոտ ցանկություն առաջացնել իմանալու, հասկանալու և իրական իրավիճակներում կիրառելու ձեռք բերած բարոյական գիտելիքները
- սովորած և ուսումնասիրած ստեղծագործություններից առանձնացնի դրականն ու ուսանելին, ազնիվն ու բարին
- հայրենասիրական—իմանա և ճանաչի ազգային ավանդույթները, դարերի ընթացքում ստեղծված, բայց մոռացության գիրկն անցած բառն ու բանը, երգն ու խաղը,սիրի, հպարտանա իր հերոսներով, նրանց գործը դարձնի իրեն օրինակ
- գեղագիտական-ճանաչողական հետաքրքրությունների զարգացում,գեղեցիկ խոսքի ձևավորում, կապը մշակույթի հետ

9.Աշխատանքը ծնողների հետ,համագործակցային աշխատանք-հաշվի առնել դիմացին կարծիքը,լսելու ունակություն:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ

1. Կարողանա համառոտ և գրագետ ներկայացնել իր կատարած աշխատանքը:
2. Ինքնուրույն հետազոտական և գործնական աշխատանք կատարելու կարողություն
3. Նորանծանոթ բառերով հարստացնելու բառապաշարը՝կիրառելով դրանք:
4. Կարողանալ ուսումնասիրած թեմաներից տարանջատել ինչն է լավը և ինչն է վատը:
5. Կարողանալ աշխատել ծնողների հետ՝սովորել և սովորեցնել կարողության մշակումը:
6. Եվ վերջապես իմ առջև դրված հիմնական խնդրի լուծումը ՝ձևավորել ճիշտ արժեհամակարգով մարդ- քաղաքացի ,որը այսօր շատ է անհրաժեշտ բոլորիս:

Միջոցառման թե՛ նախապատրաստական աշխատանքների ժամանակ, թե՛ փորձերի, թե՛ ընթացքում ,թե՛ ավարտից և քննարկումից հետո ,ես համոզված եմ,որ կարողացա հասնել նրան ինչին ձգտում էի՝սիրել գիրքը,հայրենիքը, ժողովրդական գոհարները և մաքուր ու անաղարտ պահելով այդ իմաստությունները փոխանցել հետագա սերունդներին:

«ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԻՄԱՍՏՈՒՆ Է» ԲԵՄԱԳԻՐ

ԵՐԳ- «Փոքրերի աշխարհ»/Ա. Բարսեղյան/

/շարվում են ,ներս է մտնում Մ. Մաշտոցը և Կորյունը/

Խումբ- Գալիս են, գալիս են….

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ- Աստծո զորությամբ և արքա Վռամշապուհի ու Վեհապառ տեր Սահակ Պարթևի հավանավորությամբ, վերջապես կատարվեց բոլորիս երազանքը: Մենք ունեցանք մեր աշխարհի ամենամեծ գանձը՝ այն անմահ

զորաջոկատը՝36 տառամարտիկները,որ հայ ժողովրդին կուղեկցեն դեպի ապագա և հավերժություն։

ԿՈՐՅՈՒՆ--/մոտենում է Մաշտոցին,համբուրում ձեռքը՝չոքած /-Անմահ է քո գործը , Ուսուցի՛չ։

ՄԱՇՏՈՑ-Վե՛ր կաց ,Կորյո՛ւն,այս տառերով դու և քո ընկերները,հետագա դարերի բոլոր հայ աշակերտները անմահ կպահեք հայ ոգին ու մեր ժողովրդին :

ԿՈՐՅՈՒՆ- Ա՛յո, Ուսուցի՛չ, մենք քո պատգամը սրբությամբ կկատարենք։ Երդվո՛ւմ ենք։

ԽՈՒՄԲ- Երդվո՛ւմ ենք/ծափեր/ Կեցցե՛ Մաշտոցը,Փա՛ռք հայոց գրերին ու անմահությանը։

/Մաշտոցը և Կորյունը դուրս են գալիս/

ԱՇ- Այս ամենը տեղի է ունեցել մեզանից 1617 տարի առաջ։

ԱՇ- Դարեր են եկել ու անցել մեր հողի վրայով:Նրանցից ամեն մեկը մի վերք է թողել այս հողում,մի կնճիռ՝ժողովրդի ճակատին ու նրա սրտում։

ԱՇ--Հայաստան աշխարհ….ոչ ոք չի կարող ստույգ ասել՝ երբ առաջին անգամ քարը քարին դրվեց այս հինավուրց լեռնաշխարհում։

ԱՇ--Բիբլիական արմատներ ունեցող այդքան դասական ու այդքան ժամանակակից քո պատմությունն անելիս ամենից առաջ հիշում ենք նրան,ում իմաստության լույսով ճառագեց հայոց գիրը։

ԱՇ- Եվ ոսկեդենիկ հայերենով գրվեցին մատյանները։

ԱՇ-- Ստեղծագործելու մեջ վարպետ պայծառ մտքով իմ ժողովուրդը մարգարիտի պես հատիկ- հատիկ ստեղծեց իր անմահ գանձերը՝հեքիաթ, առակ, երգ ու տաղ, խաղ ու պար…Ու անմահացավ իր արվեստով։

ԱՇ-Այսօր դրանք հասել են մեզ՝ մաքուր, հղկված՝պարզ ու վճիտ։

ԱՇ- Մենք էլ պիտ ձգտենք միշտ բարիք ստեղծել,

Բարձունքներ նվաճել անհասանելի,դժվարությունից երբեք չվախենալ։ Եվ մեծն Թումանյանի պես հպարտանալով, բարձր բղավե՛նք։

ԱՇ- Գանձեր ունեմ անչափ ,անծիր,և հարուստ եմ,ջա՛ն, ես հարուստ։

Ծով բարություն,շնորհք ու սեր, ճոխ պարգև եմ առել վերուստ։

ԱՇ- Անհուն է հանքը իմ գանձերի,սիրտս է առատ ,լայն ու ազատ,

Ինչքան էլ որ բաշխեմ ձրի՝սերն անվերջ է , բարին՝ անհատ։

ԵՐԳ— ՀԵՔԻԱԹԻ ԳԻՐՔԸ/Անուշկա/

ԱՇ- Հեքիաթներ կան զվարճալի և տխուր,որոնք մեզ ծանոթ են մանկուց։ Առանց հեքիաթների մենք ապրել չենք կարող։

ԱՇ- դրանք կապված են աշխարհի բարու և չարի,արդարության մասին մեր առաջին պատկերացումների հետ։

ԱՇ— Հեքիաթները խելոք են միշտ,

Թեկուզ խառն են և սուտ և ճիշտ։

Սուտը խելքի մաղով մաղեք, ճշտից խրատ ու դաս քաղեք։

ԱՇ- /երաժշտություն և բարձր դռան թակոց/ Հեքիաթը թակում է մեր դուռը։

Խումբ- Ո՞վ է եկել մեզ հյուր։

ԳՅՈՒԼՆԱԶ ՏԱՏ- Բարև, սիրելինե՛րս։ Իմացա, որ ձեզ մոտ տոն է , եկա հյուր;Ես գիտեմ, թե դուք որքան հեքիաթներ եք կարդացել։ Սիրել բարին, ատել՝չարը։ Գիտեմ նաև,որ պատրաստել եք անակնկալ մեզ բոլորիս համար;

ԱՇ- Այո՛, սիրելի՛ Գյուլնազ տատ, դու նստիր այսեղ և դիտիր մեր պատրաստած անակնկալը։

ՀԵՔԻԱԹՆԵՐԻՑ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԲԵՄԱԿԱՆԱՑՈՒՄ /**տե՛ս հավելված էջ 22/**

1.Քաջ Նազար 2. Բարիկենդանը 3. Կախարդական լավաշը 4.Անխելք մարդը

5.Սուտլիկ որսկանը

ԳՅՈՒԼՆԱԶ ՏԱՏ— Սիրելիներս,եթե ունենայիք կախարդական փայտիկ, ինչ կանեիք։

/պատասխաններ դահլիճից/

ԱՇ-Թե հրաշքով դառնամ կախարդ,մի հրեղեն ձի կհեծնեմ,

Կանցնեմ գետեր, օվկիան ու ծով;

Գավազանի մի հարվածով կվերացնեմ այս աշխարհից ամեն չարիք

Ու կարարեմ երգ ու բարիք։

ԱՇ--Թե հրաշքով դառնամ կախարդ,

կպատրաստեմ երկրագնդի մեծության չափ մի կարուսել

Ու կբազմեցնեմ այդ վիթխարի կարուսելին բոլոր ազգերի մանուկներին,

Որոնք իրենց զվարթ խաղով, բազմալեզու երգ - ծիծաղով

Հնթեցնեին հիմնը գարնան,հիմնը կյանքի, խաղաղության։

ԵՐԳ—«ՈՒՄ ԽՆԴՐԵՆՔ»/Անահիտ Շահզադեյան/

ԳՅՈՒԼՆԱԶ ՏԱՏ— Ապրեք, ապրեք իմ թոռնիկներ,դուք շատ ճիշտ եք հասկացել հեքիաթների խրատները։ Կարող եք ասել ի՞նչ սովորեցիք։

ԽՈՒՄԲ- Այո։

/Գունավոր թղթերից խնձորներ՝ վրան գրված բառերը/

ԱՇ- Երկնքից ընկավ ոչ թե երեք, այլ …բազում խնձորներ

(Այս բառերով խնձորները երեխաները փակցնում են իմաստության ծառին։

Տե՛ս հավելված էջ 17-18)

ԲԱՐՈՒԹՅՈՒՆ , ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ , ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ԿՅԱՆՔՈՒՄ ՄԻՇՏ ԼԱՎԸ ՏԵՄՆԵԼ , ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ,ՏՈՒՆ ՉՔԱՆԴԵԼ , ԵՐԱԶԵԼ /ԱՍԵԼ և ԿԱԽԵԼ ԾԱՌԻՑ/

ԳՅՈՒԼՆԱԶ ՏԱՏ- Հիանալի է։ Դե իմ ժամանակը սուղ է։ Մնաք բարով, շնորհակալություն այս հետաքրքիր պահերի համար։ Եղե՛ք ուշիմ ու ջանասեր։

ԱՇ- Մենք կմեծանանք, կդառնանք տարբեր և հոգսերի շարքում մենք կդադարե՞նք հավատալ հեքիաթին :

ԽՈՒՄԲ- Ո՛Չ :

ԱՇ- Հեքիաթը մեզ նորից հյուր կգա, և մենք նրան կհանդիպենք մեղմ ժպիտով,որովհետև նա նորից ապրելու է մեզ հետ։ Չէ որ նա և՛ մեծերինն է և՛ փոքրերինը։

ԽՈՒՄԲ- Մնաս բարո՛վ, Գյուլնա՛զ տատ։

ԵՐԳ--ԴԱԼԻԹԱ-ՀԵՔԻԱԹ

ԱՇ- Այս ինչ աղմուկ է դրսում։

ԳԱԼԻՍ ԵՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

ՊԱՐԵԿԸ- Դուք մեզ չէիք սպասում։ Մեր մասին էլ է ժողովուրդը ստեղծագործել;

ԱՂՎԵՍ-Մենք էլ ենք խրատում, սովորեցնում, բայց ոչ ուղղակի, այլ այլաբանորեն;

ԱՂԱՎՆԻ-դե ասեք մենք որտեղի՞ց ենք։

ԱՇ- Ձեզ էլ ժողովորդը ստեղծել իր պարզ ու հասարակ, բայց շատ խորիմաստ ստեղծագործություններում,որոնք ունեն խրատական բնույթ։ Եվ այն կոչվում է…

ԽՈՒՄԲ- Առակ։

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ /միասին / կներկայացնենք փոքրիկ հատվածներ, իսկ դուք կռահեք առակի վերնագիրը

ԲԵՄԱԿԱՆԱՑՆԵԼ ԱՌԱԿՆԵՐԸ

1 Կյանքից թանկ բանը

2 Հովազը և աղվեսը

3 Գայլն ու գառը

4 Գյուղացին և իր որդիները

ԱՇ- Իսկ ինչպես է ավարտվում առակը

ԽՈՒՄԲ- Առակս ինչ կցուցանե;

ԿԱՐԵՎՈՐԸ ԽԵԼՔՆ Է,ՉԴԱՎԱՃԱՆԵԼ ԸՆԿԵՐՈՋԸ,ՁԳՏԵԼ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ,ԵՐԱԽՏԱՄՈՌ ՉԼԻՆԵԼ,ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ՄԻՏՔ ՈՒՆԵՆԱԼ, ՀԱՄԵՐԱՇԽ ԼԻՆԵԼ,ԳՆԱՀԱՏԵԼ ՓՈՔՐԻ ՈՒԺԸ

(Այս բառերով տերևները երեխաները ամրացնում են նորից իմաստության ծառին։

Տե՛ս հավելված էջ 19)

ԵՐԳ- ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ-/Հռիփսիմե Խրիմյան/

ԱՇ- Ժողովուրդը ստեղծել է նաև երգ ու տաղ ։

ԱՇ- Դրանք նվիրված են աշխատանքին՝հորովելներ,սիրային, օրորոցային,պանդխտության, ռազմի։

ԱՇ- Իսկ գիտե՞ք թե ով է դրանք խազագրելն ինչպես են անվանում նրան։

ԱՇ--Կոմիտասը՝երգի Մաշտոցը։

ԱՇ- Իսկ մեզ մոռացաք։ Ինչքան էլ փոքրաածավալ ենք,բայց ունենք խոր իմաստ։ Մեզնով է համեմվում խրատական միտքը։

ԱՇ- ինչպես կարող ենք ձեզ մոռանալ մեր առածներ և ասացվածքներ ։ Դուք կարճ եք, բայց խորիմաստ։ ՈՒսուց.-Ժողովրդի կողմից ստեղծած այս գոհարները մեզ կներկայացնեն մեր շատ սիրելի ծնեղները։ Եկեք ոգևորիչ ծափերով բեմ հրավիրենք

մեր ծնողներին: Ընտրեք այս թերթերը և ըստ համապատասխան նկարների բաժանվեք խմբերի: /վարդ, ձնծաղիկ/

ՈՒ- Յուրաքանչյուր խմբին հանձնարարվում է գտնել 7 առած ,որոնք պատկերված են նկարում: **/Տես հավելված էջ 20/**

Ու-/հանձնել նկարները/ Մինչ նրանք կմտածեն,4-րդ դասարանի աշակերտները իրենց գեղեցիկ կատարումով մեզ կներկայացնեն ժողովրդական գոհարներից մեկը՝երգ «Նուբար» :

——ԵՐԳ «ՆՈՒԲԱՐ»

ՈՒ- Ստուգում ենք կատարված աշխատանքը: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար մեկ դրոշ/ստուգել ,հանձնել դրոշներ/:

ՈՒ- Ապրեք սիրելի մայրիկներ:Այժմ մրցենք դարձվածքների ասպարեզում:Նկարներին համապատասխան ասել դարձվածքները: **/Տես հավելված էջ 21/**Մինչ դուք կմտածեք ՝սիրով նորից կլսենք 4-րդ դասարանի կատարումը՝

ԵՐԳ—՝ «ՍՈՆԱ ՅԱՐ»

ՈՒ-Իսկ այժմ կասվեն ողովրդական հանելուկներ, իսկ դուք կասեք պատասխանը ,ինչպես միշտ, ճիշտ պատասխանի համար կստանաք դրոշ:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻՆ, ՀԵՏՈ ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻՆ՝ ՏԱԼՈՎ ԴՐՈՇՆԵՐ:

ՈՒ- Եվ վերջին հանձնարարությունը.խմբից մեկը կատարում է 10 քայլ և ասում անեծք,իսկ մյուս խումբը՝ օրհնանք,չպետք է կրկնվել:

———ԿԱՏԱՐԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ <ԳՆԱՀԱՏԵԼ

ՈՒ--Հաշվում ենք դրոշները: Հաշիվը, ծափողջյուններ մեր խելացի, գիտակ, ընթերցասեր ծնողներին: Կեցցեք, շնորհակալություն

ԱՇ- մնացին հետաքրքրաշարժ խաղերն ու հանելուկները

Պար-ՈՒզունդարա

ԽԱՂ- ԻՆՉՈՎ ԳԱՄ 1գնացքով, երգ ու պարով, ցատկելով, մեկ ոտքի վրա ցատկելով, կքանիստ քայլքով,

ՈՒ-- Իսկ այժմ ժողովրդական երկու խաղ:

ԽԱՂ— ՊԱՐԱՆ ՁԳԵԼ

ԱՍՎՈՒՄ է ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ,ԻՍԿ ԴԱՀԼԻՃԸ ՏԱԼԻՍ է ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Արևն անցկացավ՝ ծաղկեցին,
Լույսը բացվեց՝ թառամեցին։
/աստղեր/
Զուրկ քնքշանքից իր հոր ու մոր,
Այդ ո՞վ է ծնվում ամեն օր։
/արև/
Մի գոտի կա ծալվեծալ,
Երեքծալ կամ՝ յոթնծալ,
Հենց որ հայտնվի երկնքում.
Տեսնողները կցնծան։
/ծիածան/

Կծեցի՝ քրտնեցի։ /պղպեղ/
Սև-սև այծեր
Հազար տարվա մտքի կայծքեր։
/գիրք/
Քաղաքներ են՝ տուն չունեն,
Ծովեր, գետեր՝ ջուր չունեն,
Ճամփաներ են՝անճամփորդ,
Բարձրիկ լեռներ՝ ձյուն չունեն։
/քարտեզ/

ԱՇ-Կոչ ենք անում ամբողջ աշխարհին՝

Շատ ենք ուզում խաղաղ ապրել, Բայց և ուզում ենք մենք տերը դառնալ Մեզնից խլված մեր թանկ «ԷՐԳՐԻՆ»։

ԱՇ-ՈՐ մեր տատիկ- պապիկները

Չոր աչքերով միշտ անկողին մտնեն,

Կորցրած հույսն ու երազները նորից գտնեն,

Անտրտունջ ապրեն,ծերությունն իրենց վայելեն։

ԱՇ-Մենք լսում ենք նրանց բարի խորհուրդները,

Միշտ հետևում ենք նրանց պատվիրաններին,

Ինչպես կարողանում ենք՝ օգնում ենք նրանց,

Մեր հայ լինելու մասին չենք մոռանում բնավ։

ԵՐԳ—«ՄԵՆԱԿ ՉԵՆՔ ՄԵՆՔ../ԷՄՄԱ ԱՍԱՏՐՅԱՆ/

ԱՇ-Ազգի համար միշտ մարդ լինել,

Ազգի համար միշտ վարդ լինել,

Լինել միշտ մարդ մեծատառով,

Եվ միշտ խոսել մայրենիով։

ԱՇ- Իմ հայ լեզու

ԵՐԴՎՈՒՄ ԵՆՔ պահպանել քեզ՝որպես սերունդեսերունդ փոխանցված և ինձ վստահված տոհմական սրբություն /խումբ- երդվում ենք/

ԱՇ- Երդվում ենք քեզնով արտասանել միայն արդարության խոսքեր

ԱՇ-Երդվում ենք քեզ կրել շնչովս, արյունովս,ավյունովս.. ԽՈՒՄԲ- Երդվում ենք

ԱՇ- Այնպես եմ ուզում շուտ մեծանալ,բայց…

ԱՇ- Բայց դեռ պետք է ուսում առնել,շատ գիտելիքներ ձեռք բերել,

ԱՇ- Բայց առայժմ վայելենք սիրով անհոգ ու ուրախ մանկությունը մեր

Որտեղ հեքիաթը՝ իրականություն,իսկ չարը բարի է դքռնում միշտ։

ԱՇ- Դե եկեք երգենք ու պարենք, մեր ուրախ տոնը ծաղկեցնենք

ԵՐԳ,,ՊԱՐ../ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԵՐ.՝ ԷԴԳԱՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հաճախակի կատարվող արտադասարանական միջոցառումները շատ են օգնում աշակերտների թե՛ արժեհամակարգի ձևավորմանը,թե՛աշակերտների ինքնաարտահայտման և ինքնադրսևորման հարցերում,եթե վերջիններս անմիջապես մասնակցում են տվյալ միջոցառման և՛ թեմատիկայի ընտրությանը,և՛ միջոցառման մասնակցմանը,իսկ ուսուցիչը ընդամենը ուղղորդում է նրանց և արդյունքում ավելի լիարժեք է ճանաչում նրանց՝իր սաներին: Ցավոք սրտի մեր օրերում ցանկացած միջոցառման նախաձեռնողը, պլանավորողը հիմնականում դասվարն կամ դասղեկն է լինում,կամ էլ որևէ առարկայի ուսուցիչը:Մինչդեռ աշակերտներին հանձնարարելով որպես միջոցառման կազմակերպման ու իրականացման պատասխանատուներ: Նրանց մեջ պետք է բորբոքել հետաքրքրության ու սիրո կրակը միջոցառումը որակյալ ու բովանդակալի կազմակերպելու համար: Աշակերտները պասիվ կարգավիճակից կդառնան ակտիվ նախաձեռնողներ և ամեն մեկը իր հնարավորությունների և ունակությունների սահմանում կդրսևորի իր անձնային դրական որակները, լիարժեք կիրականացվի արժեհամակարգի բոլոր դրսևորումները:

Այսպիսով, արտադասարանական միջոցառումները պլանավորելիս անհրաժեշտ է առաջնորդվել ըստ իս,այսպես.

1.Դրանք պետք է լինեն բազմազան իրենց ձևով և բովանդակությամբ,լինեն հետաքրքիր և զարգացնող :

2.Պետք է հաշվի առնել երեխաների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները :

3. Յուրաքանչյուր միջոցառում պետք է որոշակի նպատակ հետապնդի և ուղղված լինի կոնկրետ խնդիրների լուծման:

6.Պետք է ակտիվ մասնակցություն ունենան նաև ծնողները:

7.Միշտ, ամենուր և ամեն պահի պետք է դաստիարակենք մարդ-քաղաքացուն, որը պիտանի լինի մեր հայրենիքի հետագա զարգացմանը

8.Սովորողների նկատմամբ դաստիարակչական ազդեցությունը շատ դեպքերում պայմանավորված է ուսուցչի բարոյական կերպարով,նրա գիտելիքներով և հմտություններով,կազմակերպչական կարողություններով և այլն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Ընտանիք և դպրոց- 2012 հ. 5 .

2.Հայրենագիտությունը դպրոցում- 2008 հ. 3-4 .

3.Մանուկյան Ս. Պ. Ընդհանուր մանկավարժագիտություն, «Զանգակ-97»,Ե.,2005

4.Մանուկյան Մ.Մ. , Արտադասարանական դաստիարակչական աշխատանքի առանձնահատկությունները,Ե., «Լույս»,1980

5.Մանկավարժություն -2012 հ.5

6.Նախաշավիղ 20125 հ. 2

7. Սուխոմլինսկի Վ. Ա.,Դաստիարակության մասին,Ե., «Լույս» 1976,

8.Սուխոմլինսկի Վ. Ա.,Խորհուրդներ ուսուցչին,Ե., «Լույս» 1975

ՀԱՎԵԼՎԱԾ

Ուսումնասիրել հայ ժողովրդական հեքիաթները:

Գտնել նմանատիպ մշակումներ; Ի՞նչ սովորեցինք:

Ինչ է առակը,մշակումները,խրատանին:

Առած,ասացվածք,դարձվածք,օրհնանք, անեծք:

Ներկայացնել նկարների տեսքով

Ժողովրդական երգերը,մշակումները,պարերը,հանելուկները և խաղերը:Սովորել և սովորեցնել մյուսներին

ԽՍԱՍՏԱՓՈՒՄ ԵՍՍ


ԸՆԿԵՐՈՒՀԻ
ՀԱՅԼԻ
ՊԱՆԱՍԵՍԻՆ
ՄԱՐԳԱՐԻՏԻ
ՄԱՐԳԱՐԻՏԻ
ՄԱՐԳԱՐԻՏԻ
ԷԼՈՒՄԻՏԻ
ԿԱՐԵՎՈՐ
ԿԱՐԵՎՈՐ
ԵՎԲԱՐԻՍԻ


ՄԵԼԲ Է
ՇԱՐԿԱՆ
ՄԵՂՈՒ
ՇԱՐԿԱՆ
ԵՐԿԱՐ
ՍՏԱՄՈՍ
ՇԱՐՔԵԼ
ԳՈՐԾԵԼ
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԱՀՄԱՆՈՒՄ



1. **ՔԱՋ ՆԱԶԱՐԸ**

ՆԱԶԱՐ-Ա՛յ կնիկ ի՞նչ քարվան կտրելու գիշեր է…Սիրտս ասում է վեր կաց գնա Հնդկաստանից եկող Շահի քարավանը կտրի, բեր տունը լցրու…

ՈՒՍՏԻԱՆ-Ձենդ կտրի ,տեղդ նստի՛ր,քարվան կտրողիս մտի՞կ արա…

ՆԱԶԱՐ- Անզգամ կնիկ,ինչո՞ւ չես թողնում գնամ քարավան կտրեմ, բերեմ տունը լցնեմ: Էլ ի՞նչ տղամարդ եմ ես,էլ ինչո՞ւ եմ գդակ ծածկում, ՝որ դու համարձակվում ես իմ առաջ խոսես:

ՈՒՍՏԻԱՆ-Հողեմ էդ վախկոտ գլուխդ, դե հիմա գնա քարավան կտրի:

ՀԵՂԻՆԱԿ-Էս Նազարը մնում է դռանը:Վախից լեղապատառ է լինում:Ինչքան աղաչում- պաղատում է,որ կնիկը դուռը բաց անի, չի անում: Ամառվա շոգ օր, գազազած ճանճերը: Ինքն էլ էնքան ալարկոտ,որ ալարում է քիթը սրբի: Ճանճերը գալիս են սրա քիթ ու պռնգին վեր գալի,լցվում:Որ շատ նեղացնում են ձեռը տանում է

երեսին զարկում:Որ երեսին զարկում է՝ ճանճերը ջարդվում են առաջին թափվում:/ասելիս՝միա ժամանակ Նազարը կատարում է գործողությունը/

ՆԱԶԱՐ- Վա՜հ,ես ի՞նչ էր…/զարմացած նայում է առաջը լցված ճանճերին/

ՀԵՂԻՆԱԿ-Ուզում է համրի,թե մի զարկով քանիսին սպանեց՝չի կարողանում: Մտածում է ,որ հազարից պակաս չի լինի:

ՆԱԶԱՐ- 1,2,3,10,100,1000….Վա՜հ, ես էսպիսի մարդ եմ ելել ու մինչև է էսօր չեմ իմացել …Ես, որ մի զարկով կարող եմ հազար շունչ կենդանի ջարդել,էլ ինչ եմ ես անպիտան կնկա կողքին վեր ընկել…

ՀԵՂԻՆԱԿ-Էստեղից վեր է կենում ուղիղ գնում իրենց գյուղի տերտերի մոտ:

ՆԱԶԱՐ-Տերտե՛ր, օրհնյալ ի տեր:

ՏԵՐՏԵՐ- Աստված օրհնի, որդի՛ս:

ՆԱԶԱՐ- Տերտե՛ր, բա չես ասիլ՝մին զարկի, հազար շունչ կենդանի ջարդեցի: Խնդրում եմ իմ արածը անմահացրու,որ անհայտ չմնա: Ամենն էլ կարդան ,իմանան իմ քաջագործության մասին:

ՏԵՐՏԵՐ-/վերցնում է վառած փայտը և գրում/ Անհաղթ հերոս քաջՆազար, որ մին զարկի ջարդի հազար: Ա՛ռ, վերցրո՛ւ, գնա աշխարհը նվաճի:

ՆԱԶԱՐ- Դե մնաս բարով անպետք կնիկ:Գնում եմ աշխարհը նվաճելու:/երգելով դուրս է գնում/ :

2. **ԱՆԽԵԼՔ ՄԱՐԴԸ**

ՀԵՂԻՆԱԿ_/Այնքան գնաց մինչև գտավ Աստծուն/

ԱՂՔԱՏ-բարի օր:

ԱՍՏՎԱԾ-Բարով եկար ,ի՞նչ ես ուզում:

ԱՂՔԱՏ_Էն եմ ուզում, որ ամեն մարդու էլ հավասար աչքով մտիկ անես,մեկին ավար չանես, մյուսին՝խավար.ես այնքան տանջվում ,աշխատում եմ ,էլի չեմ կարողանում կուշտ փորով հաց գտնեմ,իսկ շատերը,որ իմ կեսի չափ էլ չեն աշխատում հարուստ ու հանգիստ են ապրում:

ԱՍՏՎԱԾ-/օրհնում է/-Դե գնա ,հիմի կհարստանաս,քո բախտը տվեցի, գնա վայելի՛ր:

ԱՂՔԱՏ- Էլի բան ունեմ ասելու,Տե՛ր:

ՀԵՂԻՆԱԿ-Աստված բոլորի պատասխանը տվեց,և աղքատը շնորհակալություն արավ ու հեռացավ: Վերադարձին պատահեց չոր ծառին:

ՉՈՐ ԾԱՌ-Ինձ համար ի՞նչ ասաց Աստված:

ԱՂՔԱՏ-Ասաց քո տակին ոսկի կա.մինչև այդ ոսկին չհանեն,որ արմատներդ հողին հասնի,դու չես կանաչի:

ԾԱՌ-Էլ ուր ես գնում. Արի ոսկին հանիր էլի, համ քեզ օգուտ կլինի,համ՝ինձ,դու կհարստանաս,ես էլ կկանաչեմ:

ԱՂՔԱՏ-Չէ ես ժամանակ չունեմ,շտապում եմ,Աստված ինձ բախտ տվեց,ես շուտով պիտի գնամ իմ բախտը գտնեմ,վայելեմ:

ՀԵՂԻՆԱԿ-Հետո սիրուն աղջիկը պատահեց ու ճամփորդի առաջը կտրեց:

ԱՂՋԻԿ-Ի՞նչ լուր բերիր ինձ համար:

ԱՂՔԱՏ-Աստված ասաց դու պիտի քեզ համար մի մտերիմ կյանքի ընկեր գտնես, այն ժամանակէլ տխուր չես լինի,ուրախ ու երջանիկ կլինես:

ԱՂՋԻԿ-Դե որ այդպես է ,արի դու եղիր իմ կյանքի ընկերը:

ԱՂՔԱՏ-Չէ ես քեզ ընկերակցելու ժամանակ չունեմ,Աստված ինձ բախտ է տվել,պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ:

ՀԵՂԻՆԱԿ- Ճանապարհին սպասում էր սոված գայլը:

ԳԱՅԼ- Հը ,Աստված ի՞նչ ասաց:

ԱՂՔԱՏ- Ախպեր,Աստծու մոտ գնալիս քեզանից հետո մի սիրուն աղջիկ ու մի չոր ծառ էլ հանդիպեցին: Աղջիկը ապսպրեց, թե ինչու ինքը չի կարողանում ուրախանալ: Ծառն էլ՝թե գարուն ,ամառ չոր է:Աստծուն պատմեցի ,ասաց.-աղջկան ասա իրան համար մի կյանքի ընկեր գտնի-կբախտավորվի: Ծառին էլ ասա քո տակին էլ ոսկի կա,պետք է այդ ոսկին հանեն,արմատներդ հողին հասնեն, ու կանաչես: Եկա իրանց պատմեցի Աստծո խոսքերը. Ծառն ասաց ,դե արի հանիր ոսկին տար, աղջիկն էլ թե, ես հենց քեզ եմ ընտրում ինձ ընկեր:Ասացի չէ ,ախպեր, Աստված ինձ բախտ է տվել, պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ:

ԳԱՅԼ- Իսկ ինձ համար ի՞նչ ասաց Աստված:

ԱՂՔԱՏ- Քեզ համար էլ ասաց՝սոված ման կգաս՝մինչև մի անխելք մարդ կգտնես, կուտես, կկշտանաս:

ԳԱՅԼ- Քեզանից էլ անխելք մարդ, որտեղից գտնեմ,որ ուտեմ:

3 **ԲԱՐԻԿԵՆԴԱՆԸ**

ՀԵՂԻՆԱԿ-- Մի մարդ ու կնիկ են լինում: Սրանք միշտ կռվելիս են լինում: Մի օր մարդը մի քանի փութ եղ ու բրինձ է առնում , տանում տուն:

ԿԻՆ/բարկանալով/-- Ա՛յ ,որ ասում եմ հիմար ես ,չես հավատում. էսքան եղն ու բրինձը միանգամից ինչի՞ համար ես առել բերել. հորդ քելեխն ես տալիս, թե՞ տղիդ հարսանիքն ես անում:

ՄԱՐԴ--- Ի՞նչ քելեխ, ի՞նչ հարսանիք ,ա՛յ կնիկ,ինչ ես խոսում, տար ,պահի բարիկենդանի համար է:

ՀԵՂԻՆԱԿ---Կնիկը հանգստանում է ,տանում է պահում է:Անց է կենում մի քանի օր:

ԿԻՆ---Ա՛յ մարդ էս բարիկենդանը ինչ եղավ, չկա ու չկա:;

ՀԵՂԻՆԱԿ---Մի օր էլ շեմքին նստած է լինում,տեսնում է մի մարդ վռազ-վռազ անց է կենում: Ձեռը դնում է ճակատին ու ձեն տալիս.

ԿԻՆ—Ախպե՛ր,ախպե՛ր,հլա մի՛ կանգնի:

ՀԵՂԻՆԱԿ--Տղեն կանգնում է:

ԿԻՆ--Ախպե՛ր, բարիկենդանը դու հո չես:

ՏՂԱ--Էս կնկա ծալը պակաս է : Ասեմ ես եմ, տեսնեմ ի՞նչ դուրս կգա:

/պտտվում է կնոջ կողմը և ասում/

— հա, ես եմ բարիկենդանը,քուրիկ ջան, ինչ ես ասում:

ԿՆԻԿ—— Էն եմ ասում , որ մենք քո ծառան հո չենք , որ քո եղն ու բրինձը պահենք: Ինչ որ պահեցինք ,հերիք չէ՞… Չես ամաչո՞ւմ… Ընչի՞ չես գալի քո ապրանքը տանում…

ՏՂԱ-- Դե էլ ի՞նչ ես նեղանում,քույրիկ ջան,ես էլ հենց դրա համար եմ եկել, ձեր տունն էի ման գալիս, չէի գտնում..

ԿԻՆ-- Դե արի ,ախպեր ջան, արի քո ապրանքը տար;

4 .**ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԼԱՎԱՇԸ**

ՆԱՂԱՇ--Մայրիկ, ինչո՞ւ հացը ցամաք ես ուտում։

ՄԱՅՐ--Որդի՛ս, ես դարդս ու ցավս եմ փաթաթում լավաշի մեջ ու կուլ տալիս։

/նրանք նստած իբր զրույց են անում ու լավաշ ուտում/

ՀԵՂԻՆԱԿ-- Ա՛յո, հայոց աշխարհում տղաները շուտ են մեծանում։Դառնում են չափահաս ու մոռանում իրենց մանկական խաղերը։

/Հտևում մուլտից լավաշաչափ հողի պատկերը։ Նաղաշ նայում է ու նայում/

ՀԵՂԻՆԱԿ-- Նաղաշը տեսավ ,որ իր հայրենի լեռնոտ երկիրը մի լավաշաչափ հող է տվել հայ շինականին,տեսավ և տխուր ասաց մորը։

ՆԱՂԱՇ--Մա՛յր, ես ուզում եմ քեզ օգնել։

ՄԱՅՐ--/մայրը հաց է գրտնակում/ - Հաց թխելը քո գործը չէ, որդի՛ս։ Թե ուզում ես բախտավոր լինես ու քո հացը վաստակես,սրտիդ ուզած գործը գտի՛ր։

ՀԵՂԻՆԱԿ--- Նաղաշը որոշեց աշխարհով մեկ շրջել ու իր ուզած գործը գտնել։Նա լուսադեմին ճամփա ընկավ՝խուրջինում մոր թխած մի լավաշ հաց։ Ճանապարհին նա հանդիպեց մի հովվի, որ ուրախ -ուրախ իր շվին էր փչում։

ՀՈՎԻՎ--Էդ ո՞ւր տղա՛,հեռու է ճամփադ։

ՆԱՂԱՇ--Գնում եմ բախտս ետևից։

ՀՈՎԻՎ--Մարդ էլ բախտի ետևից գնա։Քո բախտը քո ձեռքում է։

ՀԵՂԻՆԱԿ--Նաղաշը չլսեց ու շարունակեց իր ճանապարհը։Նա շրջեց երկար-երկար,թափառեց աշխարհեաշխարհ և հասավ մի անծանոթ երկիր։Ճանապարհին հանդիպեց մի ալևոր կույր ծերունու։

ԾԵՐՈՒՆԻ--Ո՞վ ես մարդ աստծո։

ՆԱՂ--Ես Նաղաշն եմ։

ԾԵՐՈՒՆԻ--Երկար է ճամփադ։

ՆԱՂ-Բախտի ետևից եմ գնում ,պապի։

ԾԵՐ--Ես էլ գնացի բախտի հետևից ու մոլորվեցի, ծերացա,վերջն էլ աչքիս լույսը կորցրի։

ՆԱՂ--Ինչո՞վ կարող եմ օգնել քեզ ,պապի։

ԾԵՐ---Չգնաս իմ ճամփով, որդի՛։

ՆԱՂ--Էս լավաշը մայրս է թխել,կախարդական էր,ինչքան ուտում էի չէր պակասում։ Ճամփին կես եղավ։ Ա՛ռ այս կեսն էլ քեզ պապի։

ՀԵՂ---Ծերունին վերցրեց լավաշը,համբուրեց, դրեց աչքերինն և լույսը աչքերի եկավ։

ԾԵՐ--Շնորհակալ եմ ,որդի՛ս։Լավաշիդ զորությունը չի կորել։Այն վերադարձրեց աչքերիս լույսը։ Դալար մնա մորդ ձեռքերը։Իսկ լավաշդ պակասեց ,զավա՛կս,քանի որ քրտինքովդ չէիր վաստակել։

ՀԵՂ--Հոգնած քնեց Նաղաշը, և երազում շատ հեռվից լսեց պապի իմաստուն խոսքերը։

ՁԱՅՆ--Լավաշդ նորից կախարդական կդառնա, եթե այն ջրես քրտինքովդ առատ։

ԱՇ-Այժմ կներկայացնենք մեր նորօրյա «Սուտլիկ որսկանը»։

ՍՈՒՏԼԻԿ ՈՐՍԿԱՆԸ

ԱՇ--Ընկեր Ներսիսյանի նախաձեռնությամբ և ծնողների մասնակցությամբ դասարանով Սևան գնացինք։Երկար գնացինք, թե կարճ,մեկել ի՛նչ տեսանք,մեր լիճը չկա։Տեղը ջրով լցված մի հինգ վեց դույլ էր դրված։։Ու մարդիկ նրա մեջ ի՛ո չէին լողանում, ի՛ո չէին լողանում ու ուրախանում։

ԱՇ-- Մենք շատ տխրեցինք,նստեցինք ու ողբ կապեցինք։ Ես լալիս էի, Ավետը լալիս էր,Զորիկը լալիս էր, ընկ ներսիսյանը լալիս էր, Կարոն լալիս էր։Մեր ուսուցչուհու ձեռքին մի ցուցափայտ կար,հո ցուցափայտ չէր…՝մի երկար թվանք;

Երկնքին նայեց,սև ամպ տեսավ՝տուր թե կտաս ,ի՛ո չխփեց… Ամպը ճաքեց։ Ամպը ճաքեց, անձրև թափեց,լիճը լցվեց..

ԱՇ--Ես ուրախացա, Ավետը ուրախացավ, Սմբատը ուրախացավ, ընկ. Ներսիսյանը ուրախացավ։ Կարոն վազեց ջուրը մտավ։ Մենք էլ նրա հետևից> մեկ էլ տեսանք էն մեր Կարոն մի ձուկ բռնած գալիս է , ի՛ո ձուկ չի, մի հսկա կետ՝ երեք շենքի չափ։

ԱՇ--- Երեխեքը վազեցին իմ ձեռքից կետը վերցրին։ Կրակ վառեցին, կետին շշի վրա քաշեցին ու խորովեցին։Մենք բոլորս հավաքվեցինք ,որ հաց ուտենք։ Մեկ էլ տեսանք կետը ուռեց, ուռեց ու բըը--ըըխկ՝պայթեց։

ԱՇ-- Եվ ահա ինչ հրաշք տեսանք. ամեն մեկիս ափսեի մեջ մի խոսող ձուկ։

ԱՇ---Ինձ մի կերեք ջուրը գցեք, ես իշխանն եմ ձեր Սևանի։

ԱՇ-- Ես խղճացի ձկանը ջուրը գցեցի, բոլորը իմ հետևից։

ԲՈԼՈՐԸ ՄԻԱՍԻՆ-- Եվ այսպես `մենք կերած- խմած, սոված-- ծարավ տուն հասանք։